ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ
ՎԱՆԱՁՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ
HELSINKI CITIZENS' ASSEMBLY
VANADZOR OFFICE

2001 Հայաստանի Հանրապետություն,
Վանաձոր Տիգրան Մեծի պողոտա 59
59 Tigran Metsi st.
Vanadzor, 2001, Republic of Armenia
Tel. (հեռ.) (374 322) 4 22 68
Fax (ֆաքս) (374 322) 4 12 36
E-mail: hcav@hcav.am

Ե/2013- 20.11./672.
20.11.2013 թ.

ՀՀ գլխավոր դատախազ
Գ. Կոստանյանին

ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՂՈՐԴՈՒՄ

Իր որդու՝ Ռուբեն Ներսիսյանի իրավունքների պաշտպանության համար 2013թ. նոյեմբերի 12-ին մեր կազմակերպություն է դիմել Գյումրի քաղաքի Անի թաղամասի, 7-րդ փողոցի 3/5 հասցեի բնակիչ Անդրանիկ Ներսիսյանը:

Ըստ Անդրանիկ Ներսիսյանի՝ 2012 թ-ի հունիսի 29-ին Ռուբեն Ներսիսյանը զորակոչվել է ՀՀ զինված ուժեր Գյումրիի զինկոմիսարիատից: Ծառայության է անցել Լեռնային Ղարաբաղի Արա լեռ գյուղի զորամասում:

Ծառայության 2-րդ ամսվա մեջ նրա մոտ՝ ամորձու վրա, առաջացել է նորագոյացություն, որի առկայությունը հաշվի չի առնվել և նրան տարել են զորավարժությունների, որի ընթացքում փոքր նորագոյացությունը բավականին աճել է: Երբ ավարտվել են զորավարժությունները, վերադառնալուց հետո նա դիմել է զորամասի բուժկետ: Զորամասի բուժկետից նրան ուղարկել են Ջաբրայիլի հոսպիտալ:

Ջաբրայիլի հոսպիտալում չհասկանալով, թե ինչ է առաջացել Ռ. Ներսիսյանի մոտ նրան ուղարկել են Ստեփանակերտի հոսպիտալ, կատարել են տարբեր անալիզներ, հետազոտություններ և «Աջակողմյան էպիցիցիմիդ սպերմատոցելե» ախտորոշմամբ 2012 թ-ի սեպտեմբերի 21-ին Ռ. Ներսիսյանին ուղեգրել են Մուրացանի հոսպիտալի ուռոլոգիայի բաժանմունք: <u>Բաժանմունքի վարիչ Աղայանը անհրաժեշտ է համարել վիրահատություն կատարել, հաշվի չառնելով Ռ. Ներսիսյանի ծնողի դեմ լինելու հանգամանքը:</u>

2012 թ-ի հոկտեմբերի 2-ին «աջ մակամորձու գոյացություն» ախտորոշմամբ կատարել են վիրահատություն. էպիցիցիմեկտոմիա աջից, օրխիպեքսի աջից:

Մոտ 5 օր անց կատարվել է բիոպսիա և պարզվել է, որ Ռ. Ներսիսյանի մոտ առկա է չարորակ ուռուցք՝ ռադիկալ օրխոֆունիկուլէկտոմիա:

2012 թ-ի հոկտեմբերի 12-ին կատարվել է երկրորդ վիրահատությունը հեռացրել են չարորակ ուռուցքը:

Մինչ երկրորդ վիրահատության իրականացումը ուռոլոգիական բաժանմունքի վարիչ Աղայանը ծնողին հայտնել է, որ պետք է իրականացնեն երկրորդ վիրահատությունը, սակայն ծնողը զարմացել է, որ պետք է վիրահատությունը կատարվի հենց այդ հիվանդանոցում, քանի որ նրանք չեն ունեցել օնկոլոգիական բաժին եւ առաջարկել է որդուն տեղափոխել համապատասխան հաստատություն, սակայն նրան հավաստիացրել են, որ պետք է այդտեղ իրականացվի ու ասել են, որ 90 տոկոսով կլուծեն խնդիրը: Բացի այդ, բժիշկը հավաստիացրել է, որ իրենք մյուս հաստատությունների հետ կապի մեջ են եւ խորհրդակցում են միմյանց հետ:

2013թ. հոկտեմբերի 29-ին հիվանդանոցից դուրս են գրել ու ասել են պետք է անցնի քիմիաթերապիայի կուրսեր, սակայն համապատասխան ուղեգիր չի հատկացվել քիմիաթերապիայի անցկացնելու համար:

ՀՀ Շիրակի մարզի ուռուցքաբանական դիսպանսերի գլխավոր բժիշկը ասել է, որ առանց ուղեգրի եւ առանց փաստաթղթերի չի կարող սկսել քիմիաթերապիայի կուրսը: Ռ. Ներսիսյանի զորացրման մասին որոշումները եւ փաստաթղթերը դեռևս պատրաստ չեն եղել, իսկ հորն ասել են, որ դեռ երկար ժամանակ կպահանջվի, մինչեւ թղթերը պատրաստ կլինեն, սակայն առանց թղթերի բժշկական հաստատությունը հրաժարվել է քիմիաթերապիայից:

Համապատասխան փաստաթղթեր տրամադրելու համար Ռ. Ներսիսյանի հայրը դիմել է Մուրացանի բժիշկներին, զորամաս, սակայն նրան պատասխանել են, որ «քո խնդիրն ա, ինչ ուզում ես արա»:

Վճարովի հիմունքներով ՀՀ Շիրակի մարզի ուռուցքաբանական դիսպանսերում սկսվել է քիմիաթերապիայի կուրսերը: Անհրաժեշտ է եղել իրականացնել 4 այդպիսի կուրս, որոնցից յուրաքանչյուրը արժեցել է 150.000 ՀՀ դրամից մինչ 160.000 ՀՀ դրամ: Բացի այդ, անհրաժեշտ է եղել իրականացնել այլ հետազոտություններ, որոնց համար անհրաժեշտ են եղել լրացուցիչ ծախսեր:

Անդրանիկ Ներսիսյանը դիմել է ՀՀ պաշտպանության նախարարին անհրաժեշտ բուժումների վերաբերյալ համապատասխան օգնություն ստանալու խնդրանքով, սակայն ի պատասխան հայտնել են, որ Ռ. Ներսիսյանին ԲՍՓ-ի որոշման հիման վրա, օրենքով սահմանված կարգով տրվելու է զինհաշմանդամի կարգավիճակ, իսկ ՀՀ-ում գործող իրավական ակտերով ՀՀ ԶՈՒ ռազմաբժշկական վարչությանը որևէ այլ լիազորություն վերապահված չէ:

2013 թ-ի մայիսի 16-ին Ռ. Ներսիսյանի մոտ տեղի է ունեցել հիվանդության կրկնություն, եւ վիճակը էլ ավելի է վատթարացել, ու երկու օրվա մեջ նորագոյացությունը առաջացել է աորտայի վրա: Մուրացանի հոսպիտալում զինկոմի տեղեկանքի հիման վրա իրականացրել են ԿՏ (համակարգչային տոմոգրաֆիա): Ախտորոշումից անմիջապես հետո խորհուրդ են տվել երեխային տեղափոխել Քանաքեռի բուժհաստատություն՝ ճառագայթման, սակայն եզրակացություն եւ ուղեգիր չեն տրամադրել:

Քանաքեռ բժշկական կենտրոնում հրաժարվել են հետագա քիմիաթերապիայից: Ըստ Անդրանիկ Ներսիսյանի՝ հրաժարվել են այն պատճառով, քանի որ սկզբում իրենք չեն բուժումը իրականացրել:

Հայրը դիմել է Իսրայելի առողջապահական համակարգի, Թել-Ավիվի օնկոլոգիական կենտրոն, որտեղից նրան տեղեկացրել են, որ հնարավոր է իրականացնել բուժումը՝ 22.000-28.000 եվրոյի դիմաց: Հայրը դիմել է ՀՀ ՊՆ՝ խնդրելով աջակցություն տրամադրել արտերկրում բուժումն իրականացնելու համար, ինչպես նաև ՀՀ պաշպանության նախարարի հետ հանդիպում կազմակերպելու համար: Մեկ ամիս 10 օր հետո ՊՆ-ից տեղեկացրել են, որ անհրաժեշտ է ներկայացնել այն փաստաթղթերը, որոնք հավաստում են, որ բուժումը հնարավոր չէ իրականացնել Հայաստանում, իսկ 5 օր հետո խնդրել են ներկայացնել արտերկրում իրականացվող բուժման ցուցումների մասին, որոնք ծնողի կողմից ներկայացվել է:

2013 թ. հոկտեմբերի 12-ին ՀՀ պաշպանության նախարարության դիմումների բաժնից Պողոսյանը զանգահարել է եւ հայտնել, որ գումարը փոխանցել են, ու նախարարի մոտ մտնելու կարիք չկա: Ըստ ծնողի՝ ՊՆ-ն 500 000 ՀՀ դրամ՝ կանխիկ, իսկ սոցիալական վարչությունը փոստով 100 000 դրամ է հատկացրել:

Երբ գնացել են ՀՀ ԱՆ Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն ուռոլոգ-օնկոլոգ Ծառուկյանը առաջարկել է ունենալ եզրակացություն մեկ այլ՝ երկրորդ հաստատությունից, և խորհուրդ է տվել վիրահատություն կատարած հաստատության լաբորատորիայից վերցնել վիրահատված օրգանների նմուշները եւ Կանայանի (1-ին հիվանդանոց) լաբորատորիայում ենթարկել հետազոտության երկրորդ կարծիք ստանալու համար:

Ռ. Ներսիսյանի հայրը գնացել է հոսպիտալ, պահանջել վիրահատված նմուշները տրամադրել իրեն, սակայն նրան հոսպիտալի պետ Ասատրյանը հայտնել են, որ «անալիզ անող» աշխատակիցը դուրս է եկել և լաբորատորիայի եղած-չեղածը հավաքել տարել է՝ «էդպես է ստացվել»: Հոսպիտալում նրան ասել են, որ երկու օրից կստանա նմուշները, սակայն երկու օր հետո ասել են վիրահատած հեռացրած օրգանները չկան: Բժշկի հեռախոսահամարը վերցրել և զանգել է, որը հայտնել է. «մի երկու օր էլ սպասի, տեսնեմ տանը կգտնեմ, թե ոչ»:

Սեպտեմբերի մեջ (ծնողը չի հիշում օրը) ժամը 4-ին պայմանավորվել է լաբարատորիայի բժշկի հետ, որը բերել է 9 բլոկներ (նմուշներ) հեռացված մասեր, առանց երկրորդ վիրահատության նմուշների, հայտնելով, որ երկրորդ վիրահատությունը ինքը չի իրականացրել, սակայն ըստ փաստաթղթերի ինքն է եզրակացություն տվել, ասել է ճիշտ է օրգանը բերել են լաբորատորիա, հետո բաժնի պետ՝ Ասատրյանը, ուղարկել է ինձ մոտ, իբր թե ծնողն է ուզել, բուժքրոջը ուղարկել է այդ օրգանը տվել է Աղայանին ու իբր թե Աղայանը փոխանցել է ծնողին: Այսինքն, երկրորդ վիրահատության արդյունքում հեռացված օրգանները գոյություն չունեն: Բացի այդ, պարզվել է, որ ծնողին տրամադրված նմուշներում առկա է 3 կտոր վահանաձեւ գեղձից, որը Ռ, Ներսիսյանի հետ կապ չի ունեցել:

Ռ. Ներսիսյանի առողջական վիճակը օր օրի ավելի է վատանում և ըստ ծնողի հաշված օրեր են մնացել երիտասարդին:

Մինչ զորակոչը երեխան նման խնդիր չի ունեցել, իսկ զորակոչվելով անցել է ՀՀ օրենսդրությամբ սահմանված բոլոր բժշկական հետազոտությունները, որի արդյունքում ճանաչվել պիտանի զինվորական ծառայության համար և անցել ծառայության:

Նկարագրված փաստական հանգամանքները իմի բերելով կարող ենք պնդել, որ կատարվել է մի շարք հանցագործություններ.

1. 2012 թ-ի հունիսի 29-ին Ռուբեն Ներսիսյանը զորակոչվել է ՀՀ զինված ուժեր Գյումրիի զինկոմիսարիատից: Զորակոչվելուց առաջ անցել է ՀՀ օրենսդրությամբ սահմանված համապատասխան հետազոտությունները, որոնց արդյունքում ճանաչվել է պիտանի զինվորական ծառայության համար

1.1. անհրաժեշտ է պարզել բժշկական հանձնաժողովը նման եզրակացություն տալով կատարել է արդյո՞ք ՀՀ քրեական օրենսգրքով արգելված արարք թե ոչ՝

2. Ըստ սույն հաղորդմամբ ներկայացված փաստական հանգամանքների՝ առկա է բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողների կողմից մասնագիտական պարտականությունների չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելուն[1] կամ անփույթ վերաբերմունք ծառայության նկատմամբ[2], որի վերաբերյալ անհրաժեշտ է կատարել համապատասխան քննություն հիմնավորելու կամ ի սպառ հերքելու դիմումատուիս կասկածները:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով Ձեր լիազորությունները՝ դիմում եմ Ձեզ օրենքով սահմանված կարգով քրեական գործ հարուցելու և արդյունքների մասին հաղորդում ներկայացրած իրավաբանական անձիս իրազեկելու պահանջով:

Կից ներկայացնում եմ՝

1. Ռուբեն Ներսիսյանի հիվանդության պատմությունը 38 թերթից
2. ՀՀ ԶՈՒ ռազմաբժշկական վարչության պետ Կ. Խաչատրյանի թիվ 19/1235 գրության պատճենը
3. ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմի ղեկավարի տեղակալ Մ. Հայրապետյանի թիվ ՄՀ/02,1/11490-13 գրության պատճենը
4. ՀՀ ՊՆ աշխատակազմի ղեկավար Գ. Հայրապետյանի թիվ ՊՆ 1510-ն-128 գրության պատճենը
5. ՀՀ ՊՆ 23.10.2012թ. որոշման պատճենը
6. 18.10.2011թ. հիվանդության վկայագրի պատճենը
7. 15. 24.2013թ. տրված էպիկրիզի պատճենը
8. թիվ 5983 ամբուլատոր քարտի պատճենը
9. թիվ 998470 տեղեկանքի պատճենը
10. ՀՀ ՊՆ ռազմաբժշկական հանձնաժողովի կողմից տրված էպիկրիզի պատճենը

---

1. ՀՀ քրեական օրենսգրքի 130-րդ հոդված
2. ՀՀ քրեական օրենսգրքի 376-րդ հոդված

11. 04.09.2013թ. Երևանի պետական բժշկական համալսարանում հետազոտության վերաբերյալ տեղեկանքի պատճենը
13. 12.10.2012թ., 23.08.2013թ. 02.11.2013թ. համակարգչային տոմոգրաֆիայի հետազոտությունների արդյունքում կազմված տեղեկանքիների պատճենը
14. 28.09.2013թ. Իսրայելի Թել-Ավիվի օնկոլոգյական կենտրոնի կողմից տրամադրված վիրահատության նախահաշվի պատճենը

Հարգանքներով
կազմակերպության նախագահ՝ Արթուր Սաքունց

Կատարող՝ Ա. Զալյան
azalyan@hcav.am